ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

**Հաստատված է ամբիոնի նիստում**

Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ Վ.Վ.Հարությունյան /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № 6

«06» դեկտեմբերի 2023 թ.

# ԷԻԿ/բ-170 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ
Դասիչ, դասընթացի անվանում

# ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

**Մասնագիտություն՝** 101801.00.6, Սերվիս
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

**Կրթական ծրագիր՝** 101801.01.6, Սերվիս
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

**Որակավորման աստիճան՝** Սերվիսի բակալավր
/բակալավր, մագիստրատուրա/

**Ամբիոն՝** Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման__
/ամբիոնի լրիվ անվանումը/

**Ուսուցման ձևը՝** առկա
/առկա, հեռակա/

**Կուրս/կիսամյակ** առկա ՝**1-ին կուրս, 2-րդ կիսամյակ**

**Դասախոս(ներ) ՝** **Ռաֆայել Հարությունյան**
/անուն, ազգանուն/

էլ. հասցե/ներ_r.harutyunyan80@inbox.ru_

Վանաձոր- 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 3
2. Դասընթացի նպատակը և խնդիրները . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 3
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 4
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . ..
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .. .
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .. .
7. Ուսումնական աշխատանքները տեսակները . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . ..
8. Դասավանդման մեթոդներ. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . ..
9. Ուսումնառության մեթոդները . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . ..
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .. .
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ. . . . . . . . . . . . .
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . ..
    - 12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ. . . . . . . . . . . ..
    - 12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . .. .
    - 12.3. Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ. . . . . ..
    - 12.4. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ . . . . . ..
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում. . . . . . . . . . . . . ..
14. Գնահատում. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . ..
    - 14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում. . . . . . . . . . . . . . . . . . . . ..
    - 14.2. Հարցաշար. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . ..
    - 14.3. Գնահատման չափանիշներ. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . ..
15. Դասընթացի համառոտ նկարագիրչ. . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . ..

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

**1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում[1].**

«Հայաստանի աշխարհագրություն» դասընթացը կարևորվում է սերվիսի բնագավառում մասնագետների պատրաստման գործընթացում, ներառված է 101801.00.6 կրթական ծրագրի ուսումնական պլանի «Հատուկ մասնագիտականե կրթամասում:

**2. Դասընթացի նպատակը և խնդիրները.**

**2.1.** Դասընթացի նպատակն է ձևավորել գիտելքնիր Հայաստանի տնտեսության վերաբերյալ

- Հայաստանի բնառեսուրսային ներուժի ուսումնասիրության հիման վրա, տնտեսության տեղաբաշխման վերաբերյալ գիտելիքների ձեռքբերում:
- Հայաստանի տնտեսության տարածքային զարգացման օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքների փոխանցում ուսանողներին:
- ՀՀ բնակչության թվաքանակի, տեղաբաբաշխման վերաբերյալ տվյալների ուսումնասիրություն:
- Հանրապետության տնտեսության կառուցվածքի հետազոտության շրջանակներում հմտությունների և կարողությունների ձևավորում ուսանողների մոտ:
- Մարզրեի համեմատության և վերլուծելու ունակությունների ձեռքբերում ուսանողների կողմից:
- Տնտեսական ներուժի վերլուծելու կարողությունների ձևավորում տարբեր իրավիճակներում:

**2.2.** Դասընթացի խնդիրներն են բնառեսուրսային, տրածքային զուգորդումների և տնտեսության համապարփակ վերլուծության հիման վրա

- Սովորեցնել երկրի տնտեսության զարգացման տեսական հիմքերը:
- Բացատրել հանրապետության տնտեսության տարածքային տեղաբաշխման օրինաչափությունները:
- Ամրապնդել ուսանողների կողմից ձեռքբերված տեսական գիտելիքները գործնական իրավիճակային խնդիրներով:
- Սովորեցնել ուսանողներին կատարել ինքնուրույն հետազոտություններ տնտեսության վերաբերյալ և կատարել եզրահանգումներ ըստ արդյունքների:
- Սովորեցնել ուսանողներին վերլուծել ՀՀ տնտեսության առանձնահատկությունները կառավարման ձևերի փոփոխման համատեքստում:

---

[1] Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների

3. **Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները /դասընթացները/**

«Հայաստանի աշխարհագրություն դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների գիտելիքների և հմտությունների առկայությունը 101801.00.6 «սերվիսի բակալավր մասնագիտության բակալավրի կրթական ծրագրում ուսուցանվող «տնտեսական և սոցիալական աշխարհագրություն», «տնտեսագիտության տեսություն» դասընթացներից:

4. **Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը[2] և /կամ կոմպետենցիաները.**

«Հայաստանի աշխարհագրություն» դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

1. իմանա Հայաստանի տնտեսության ձևավորման տեսական հիմունքները,
2. իմանա տնտեսության ուսումնասիրման մեթոդական հիմքները
3. կարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
4. տիրապետի վերլուծելու, համադրելու, սինթեզելու, վիճակագրական հետազոտության մեթոդներին,
5. կարողանա տնտեսական չափանիշների համադրման միջոցով վերլուծել ՀՀ տնտեսությունը:
6. կարողանա հանձնարարված աշխատանքների շրջանակներում կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

**Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.**

**Ա)Ընդհանրական կոմպետենցիաներ**

**Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝**

**ԳԿ1** վերլուծելու և սինթեզելու ունակություն,
**ԳԿ4** մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,
**ԳԿ9** խնդիրների լուծում,
**ԳԿ10** որոշումների ընդունում:

**Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝**

**ՀԳԿ1** գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,
**ՀԳԿ2** հետազոտություններ կատարելու ունակություններ,
**ՀԳԿ3** սովորելու ունակություն,
**ՀԳԿ8** ինքնուրույն աշխատելու ունակություն,

**Բ)Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)**

---

[2] http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf
Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

**ԱԿ2** հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,
**ԱԿ4** ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,
**ԱԿ6** կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,
**ԱԿ11** տիրապետեն ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանան մեկնաբանել հետազոտության արդյունքները,
**ԱԿ14** տիրապետեն տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:

**5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների[3].**

«Հայաստանի աշխարհագրություն» դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել մասնագիտական գործունեության ընթացքում, ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու և կառավարման բնագավառում գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

**6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը**

| Չափանիշ | Առկա ուսուցման համակարգ | Հեռակա ուսուցման համակարգ |
|---|---|---|
| Դասընթացի ընդհանուր աշխատատարություն (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ) | 4 կրեդիտ/ 120 ժամ | |

| Աշխատանքի տեսակը | ժամաքանակ | ժամաքանակ |
|---|---|---|
| Դասախոսություն | 28 | |
| Գործնական աշխատանք | 28 | |
| Սեմինար պարապմունք | | |
| Լաբորատոր աշխատանք | | |
| Ինքնուրույն աշխատանք | 64 | |
| **Ընդամենը** | 120 | |
| Ստուգման ձևը (ստուգարք/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն) | քննություն | |

[3] Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել

7. <u>Ուսումնական աշխատանքների տեսակները</u>[4] .

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:
- **Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:
- **Սեմինար պարապմունքները** խմբային պարապմունքների հիմնական տեսակներից է, որի ընթացքում ուսանողը սովորում է բանավոր շարադրել նյութը, պաշտպանել իր տեսակետները և եզրահանգումները: Սեմինարի ընթացքում ուսանողները քննարկում, պատասխանում են թեման, զեկույցները և ռեֆերատները, որոնք հանձնարարել է դասախոսը:

  Սեմինարին պատրաստվելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնական և լրացուցիչ գրականություն տվյալ թեմայով: Գրականության ուսումնասիրությունից և համառոտագրումից հետո պետք է կազմել պլան՝ բանավոր պատասխանի համար, ապա մտածել ելույթի բովանդակությանհարցադրումների և պատասխանների մասին:

- **Լաբորատոր աշխատանքները** նպաստում են տեսական նյութի առավել լավ յուրացմանը և ամրապնդմանը: Լաբորատոր աշխատանքները նպատակ ունեն ամրապնդելու ուսումնասիրվող թեմաների տեսական դրույթները, ուսանողներին ուսուցանելու փորձարարական հետազոտությունների մեթոդները, հաղորդելու ինքնուրույն վերլուծության, տվյալների ամփոփման, լաբորատոր սարքավորումների, համակարգիչների, սարքերի, էլեկտրոնային ծրագրերի հետ աշխատելու փորձ և հմտություններ: Լաբորատոր աշխատանքն անցկացման համար ուսանողը

---

[4] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

պարտավոր է ուսումնասիրել թեմային վերաբերող տեսական նյութը (դասախոսություն, համապատասխան գրականություն) և փորձի, հետազոտության մեթոդոլոգիան:

Դասախոսի հսկողությամբ ուսանողը իրականացնում է փորձը, հետազոտությունը, գրանցում է արդյունքները և կատարում (գրանցում) համապատասխան եզրակացություն

- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են[5]՝

- Ռեֆերատ – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
- Գործարար խաղեր – պայմանական իրավիճակներում սոցիալ-տնտեսական համակարգերի և մարդկանց մասնագիտական գործունեության կառավարման գործընթացների նմանակեղծային մոդելավորում՝ առաջացող հիմնախնդիրների ուսումնասիրման և լուծման նպատակով:
- Էսսե – արձակ ստեղծագործություն՝ քննադատության և լրագրության ժանրի որևէ խնդրի ազատ վերլուծություն:
- Կլոր սեղան – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:
- Կոնկրետ իրավիճակների վերլուծություն – ուսանողների ակտիվ գործունեության կազմակերպման ամենաարդյունավետ և տարածված ձևերից մեկն է, որը զարգացնում է մասնագիտական և կեցությանը վերաբերող տարբեր հարցերի վերլուծության կարողությունը:
- Նախագծերի մեթոդ – ուսումնաճանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է, սովորող-գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ ուղղված որևէ խնդրի լուծման կամ որոշակի արդյունքի ձևակերպման:
- Հարցի նախապատրաստման մոդել –կամավորության սկզբունքով ընտրված ուսանողն իր նախընտրած հակիրճ ձևով նախապատրաստում է տվյալ առարկայից քննության կամ ստուգարքի հարցերի իր պատասխանների փաթեթը: Քննությունից (ստուգարքից) 1 շաբաթ առաջ նա հանձնում է փաթեթը դասախոսին, որը ստուգում է այդ նյութերը և որոշում դրանց համապատասխանությունը տվյալ առարկայի բովանդակությանը:
- Ինքնուրույն աշխատանք համացանցում – նոր տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:
- Աշխատանքային տետր – նախատեսված է ուսանողների ինքնուրույն աշխատանքների համար և թույլ է տալիս գնահատել ուսումնական նյութի յուրացման աստիճանն ուսանողների կողմից:
- Զեկույց – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:
- Հարցազրույց – վերահսկողության միջոց, որը կազմակերպվում է որպես հատուկ զրույց դասավանդողի և ուսանողների միջև՝ կապված այնպիսի թեմայի հետ ինչպիսին կարգապահությունն է, և նախատեսված է հստակեցնել ուսանողների գիտելիքների շրջանակը կոնկրետ թեմայի, հարցի վերաբերյալ:

---

[5] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

8. **Դասավանդման մեթոդներներն են**՝[6] հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, *թեմատիկ սեմինար*, սեմինար-բանավեճ,՝ խմբային աշխատանք, ուսուցում գործողությամբ (action learning), իրավիճակային խնդիրների վերլուծություն:
9. **Ուսումնառության մեթոդներն են**[7]՝ մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, ալգորիթմների և հրահանգների կազմում, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, փորձի/հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում․․․․

[6] Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:
[7] Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

## 10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների[8].

| հ/հ | Թեմա (բաժին) | Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | դասախոսություն | սեմինար պարապմունք | գործնական աշխատանք | լաբորատոր աշխատանք | ինքնուրույն աշխատանք |
| 1. | Հայաստանի աշխարհագրություն առարկայի էությունը, ուսումնասիրման մեթոդները: ՀՀ տարածքը, դիրքը, սահմանները: | 4 | 4 | | | 10 |
| 2. | Բնական պայմանների և ռեսուրսերի տնտեսաաշխարհագրական գնահատականը: | 4 | 4 | | | 10 |
| 3. | ՀՀ բնակչության թվաքանակը, շարժի ընդհանուր բնութագիրը,աշխատանքային ռեսուրսները և բնակչության տարաբնակեցումը: | 4 | 4 | | | 10 |
| 4. | ՀՀ արդյունաբերության ճյուղերի նկարագիրը և տեղաբաշխումը: | 4 | 4 | | | 10 |
| 5 | ՀՀ գյուղատնտեսության տարածքային և ճյուղային կառուցվածքը: | 4 | 4 | | | 8 |
| 6 | ՀՀ տրանսպորտի տնտեսական գնահակատանը: ՀՀ ոչ արտադրական ոլորտը: | 2 | 2 | | | 8 |
| 7 | ՀՀ վարչատարածքային կառուցվածքը և մարզերի տնտեսական գնահատականը: | 6 | 6 | | | 8 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 28 | 28 | | | 64 |

[8] Նման է օրացուցային պլանին

11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

| հ/հ | Անվանումը/հեղինակ | Հրատարակության տարի |
|---|---|---|
| Պարտադիր գրականություն (ՊԳ) | | |
| 1. | Ա. Պոտոսյան «Հայաստանի սոցիալ տնտեսական աշխարհագրություն» | Երևան 2020 |
| 2. | Ա. Ավագյան ՀՀ ընդերքի ռեսուրսների աշխարհագրական գնահատականը | Երևան 2001 |
| 3 | Ս. Մելքումյան ՀՀ և ԼՂՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն | Երևան 2007 |
| Լրացուցիչ գրականություն(ԼԳ) | | |
| 1. | Ս. Մելքումյան ՀՀ արտաքին տնտեսական կապերը | Երևան 2001 |
| 2. | Վալեսյան Լ. Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, | Երևաբ 1988 |
| 3. | ՀՀ տարեկան վիճակագրական տեղեկագիրք | Երևան 2022 |
| Համացանցային տեղեկատվական պաշարներ (ՀՏՊ)/ Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ) | | |
| 1. | www.armstat.am | |
| 2. | | |

12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Գրականություն[9] |
|---|---|---|---|---|
| 1. | Հայաստանի աշխարահագրություն առարկայի էությունը, խնդիրները, կապը մյուս գիտությունների հետ | • Առարկայի էությունը, առանձնահատկությունները, փոխկապակցվածությունը: | 2 | ՊԳ1 |
| 2. | ՀՀ տարածքը, դիրքը, սահմանները: Բնական պայմանների և ռեսուրսերի տնտեսաաշխարհագրական | • ՀՀ-ի մետաղային, ոչ մետաղային, հողային, բուսական, ջրային, ռեկրեացիոն ռեսուրսների, տնտեսական գնահատում:<br>• Հանրապետության ՏԱԴ-ի, ՔԱԴ-ի, մեկերևույթի հիմնական ձևերի | 4 | ՊԳ3 |

[9] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | |
|---|---|---|---|---|
| | գնահատականը: | ազդեցությունը արտադրողական ուժերի տեղաբաշխման վրա: | | |
| 3 | ՀՀ բնակչության թվաքանակը, շարժի ընդհանուր բնութա-գիրը,աշխատանքային ռեսուրսները և բնակչության տարաբնակեցումը: | • ՀՀ բնակչության թվաքանակի շարժի պատճառների, դրանց վրա ազդող գործոնների վերլուծություն:<br>• Բնակչության սեռատարիքային կազմի, աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման խնդիրների և հանրապետության բնակչության տարաբնակեցման համակարգի քննարկում: | 4 | ՊԳՅ ԼԳՅ |
| 4 | ՀՀ արդյունաբերության ճյուղերի նկարագիրը և տեղաբաշխումը: | • Նյութական արտադրության էություն բացահայտում և հիմնական ենթաճյուղերի բնութագիր:<br>• վերլուծված է հանրապետության արդյունաբերության ճյուղային և տարածքային կառուցվածքը, առանձնակի ուշադրություն է դարձված՝ վառելիքաէներգետիկ, լեռնահանքային, քիմիական, մեքենաշինական, շինանյութերի, անտառային և փայտամշակման, թեթև և սննդի արդյունաբերության ճյուղերին: | 4 | ՊԳՅ, ԼԳՅ |
| 5 | ՀՀ գյուղատնտեսության | • Հանրապետության գյուղատնտե- | 4 | ՊԳՅ ԼԳՅ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | տարածքային և ճյուղային կառուցվածքը: | սության ճյուղային կառուցվածքի կրած փոփոխությունների վերլուծություն:<br>• Ենթաճյուղերի՝ բուսաբուծության և անասնաբուծության զարգացման բնական և սոցիալ տնտեսական նախադրյալների և արդի վիճակի քննարկում: | | |
| 6 | ՀՀ տրանսպորտի տնտեսական գնահակատանը: ՀՀ ոչ արտադրական ոլորտը: | • ՀՀ-ում տրանսպորտային համակրգի արդի վիճակի վերլուծություն:<br>• Զարգացման հնարավորությունների քննարկում:<br>• Հաղարդակցման ուղիների ազդեցության չափը հանրապետության տնտեսության զարգացման վրա: | 2 | ՊԳ3 |
| 7 | ՀՀ արտաքին տնտեսական կապերի էությունը և զարգացման միտումները: | • Տնտեսական կապեր հասկացության էությունը:<br>• ՀՀ արտաքին տնտեսական կապերի ձևերի բնութագիրը:<br>• ՀՀ հիմնական գործընկերները | 2 | ՊԳ1 |
| | ՀՀ վարչատարածքային կառուցվածքը և մարզերի տնտեսական գնահատականը: | • Վարչատարածքային բաժանման էությունը և դրա ազդեցությունը երկրի տնտեսության զարգացման վրա:<br>• Հանրապետության արդի վարչատարածքային բաժանման | 6 | ՊԳ3 ԼԳ3 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | առաջին կարգի միավորների՝ մարզերի տնտեսաաշխարհագրական համալիր գնահատականը:<br>• Երևանի տարածքի, բնական ռեսուրսների, բնակչության, տնտեսության ճյուղային կառուցվածքի վերլուծություն | | |

**12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ**

| հ/հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Ստուգման ձևը | Գրականություն[10] |
|---|---|---|---|---|---|
| 1. | ՀՀ տնտեսական համակարգի ձևավորումը և զարգացումը խորհրդային ժամանակաշրջանում: | Հայաստանի տնտեսության հիմնական ճյուղերի ձևավորումը և տարածքային առանձնահատկությունները: | 2 | Բանավոր հարցում | ՊԳ2 |
| 2. | Անկախ ՀՀ տարածքը, դիրքը, սահմանները: Բնական պայմանների և ռեսուրսերի տնտեսական գնահատականը: | ՀՀ սահմանների բնութագիրը, ռելիեֆի հիմնական ձևերը, բնական ռեսուրսների տեղաբաշխումը և դրանց տնտեսական գնահատականը: | 4 | Բանավոր հարցում | ՊԳ1 |

[10] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | ՀՀ բնակչության թվաքանակը, շարժի ընդհանուր բնութա-գիրը,աշխատանքային ռեսուրսները և բնակչության տարաբնակեցումը: | Թեմայում համակողմանի վերլուծված են հանրապետության բնակչության թվաքանակի շարժի պատճառները, դրանց վրա ազդող գործոնները:: | 4 | Բանավոր հարցում | ՊԳ1 |
| 4 | ՀՀ արդյունաբերության ճյուղերի նկարագիրը և տեղաբաշխումը: | Թեմայի նպատակն է ուսանողներին ծանոթացնել արդյունաբերության տարածքային և ճյուղային կառուցվածքին: | 4 | Բանավոր հարցում | ՊԳ1 |
| 5 | ՀՀ գյուղատնտեսության տարածքային և ճյուղային կառուցվածքը: | Թեմայում քննարկված են ՀՀ գյուղա-տնտեսության ճյուղային կառուցվածքի կրած փոփո-խությունները 1990-ական թվականներից հետո: Քննարկված են ճյուղի զարգացման բնական նախադրյալները և արդի վիճակը: | 4 | Բանավոր հարցում | ՊԳ3 |
| 6 | ՀՀ արտաքին տնտեսական կապերի կառուցվածքը: | Տնտեսական կապ հասկացության էությունը և տարատեսակները: ՀՀ մասնակցությունը տարածաշրջանային ինտեգրացիոն միավորումներին: ՀՀ հիմնական գրծընկերները: | 2 | | |
| 7 | ՀՀ վարչատարածքային կառուցվածքը և մարզերի տնտեսական գնահատականը | Թեմայում լուսաբանված են ՀՀ վարչա-տարածքային բաժանման փոփոխությունները 20-րդ դարում: Վերլուծված են ՀՀ մարզերը, տրված է նրանցից յուրաքանչյուրի տնտեսա ական համալիր գնահատականը: | 6 | Բանավոր հարցում | ՊԳ3 |

## 12.3. Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Ստուգման ձևը | Գրականություն[11] |
|---|---|---|---|---|---|
| 1. | | | | | |
| 2. | | | | | |

## 12.4. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | Ինքնուրույն աշխատանքի թեմաները | Ուսումնասիրվող հարցեր | Աշխատանքի տեսակը[12] | Ներկայացման ժամկետները | Ստուգման ձևը | Գրականություն[13] |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Խորհրդային Հայաստանի տնտեսական համակարգի ձևավորման նախադրյալները: | Տնտեսության հիմնական ճյուղերի վերլուծություն, հարկահավաքման ձևերը | Ռեֆերատ | Սահմանված գրաֆիկով | Գրավոր | ՊԳ2 |
| 2. | Խորհրդային միության փլուզման նախադրյալները: | Հայաստանի տնտեսական համակարգը 1985-1990թթ: | Ռեֆերատ | Սահմանված գրաֆիկով | Գրավոր | ՊԳ3, ԼԳ3 |

[11] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն
[12] Տես 7-րդ կետի հինգերորդ պարբերությունը
[13] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3. | ՀՀ բնառեսուրսային ներուժի գնահատականը:: | ՀՀ մետաղային, ոչ մետաղային, ջրային, հողային ռեսուրսների տնտեսական գնահատականը: | Ռեֆերատ | Սահմանված գրաֆիկով | Գրավոր | ՊԳ3, ԼԳ2 |
| 4 | ՀՀ ժողովրդագրական վիճակը անկախության ժամանակահատվածում : | Բնկաչության թվաքանակի, շարժի, տարաբնակեցման, աշխատանքային ռեսուրսների համալիր գնահատականը: | Ռեֆերատ | Սահմանված գրաֆիկով | Գրավոր | ՊԳ3, ԼԳ3 |
| 5 | ՀՀ տնտեսության համալիր գնահատականը: | Արդյունաբերության, գյուղատնտեսության, ոչ արտադրական ոլորտի ներկայիս վիճակի տնտեսական գնահատականը | Ռեֆերատ | Սահմանված գրաֆիկով | Գրավոր | ՊԳ3, ԼԳ3 |
| 6 | ՀՀ մարզերի համեմատական վերլուծությունը: | Մարզերի ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն հիմնված բնառեսուրսային և դիրքային գործոնների հիման վրա: | Ռեֆերատ | Սահմանված գրաֆիկով | Գրավոր | ՊԳ3, ԼԳ3 |

**13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում**[14]

| Ռեսուրսի անվանումը | Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում) |
|---|---|
| Լսարան (հատուկ կահավորմամբ) | |
| Նյութեր լաբորատոր աշխատանքների համար | |
| Սարքեր, սարքավորումներ | |
| Համակարգչային ծրագրեր | |
| Այլ | |

[14] Նշվում են սարք-սարքավորումների, համակարգչային ծրագրերի նկարագրությունները և քանակը, որոնք անհրաժեշտ են տվյալ դասընթացի ուսումնական գործընթացը կազմակերպելու համար

## 14. Գնահատում

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառկման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի[15]:

### 14.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասերին հաճախումների հաշվառման միջոցով՝առավելագույնը 20 միավոր,
- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 20 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

### 14.2. Ուսանողների գիտելիքների ստուգում.

Դասընթացն ամփոփվում է քննությամբ:

Քննությամբ ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի 2 քննության

---

[15]«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ» (ընդունված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից 30.062022թ.),

միջոցով և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:

Քննությամբ ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2 ընթացիկ ստուգումների և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:[16]

**14.3. Հարցաշար (ըստ ծրագրի)**

1. Հայաստանի տնտեսության պատմաաշխարհագրական համառոտ ակնարկ:
2. ՀՀ տարածքը դիրքը, սահմանները:
3. ՀՀ բնակչության թիվը, շարժի բնութագիրը, տարածքային տեղաբաշխումը և տարաբնակեցումը
4. ՀՀ ընդերքի ռեսուրսների տնտեսական գնահատականը՝ մետաղային ռեսուրսներ:
5. ՀՀ ընդերքի ռեսուրսների տնտեսական գնահատականը՝ ոչ մետաղային ռեսուրսներ:
6. ՀՀ արդյունաբերության ընդհանուր վիճակի վերլուծությունը:
7. ՀՀ վառելիքաէներգետիկ արդյունաբերության զարգացումը և արդի վիճակը:
8. Լեռնահանքային արդյունաբերության և մետաղաձուլություն զարգացումը և արդի վիճակը:
9. Քիմիական արդյունաբերության զարգացումը և արդի վիճակը:
10. Մեքենաշինություն զարգացումը և արդի վիճակը
11. Շինանյութերի արդյունաբերություն զարգացումը և արդի վիճակը
12. Թեթև արդյունաբերության զարգացումը և արդի վիճակը
13. Սննդի արդյունաբերության՝ ալրաղացային տնտեսության, կաթնամթերքի, մսամթերքի, ալկոհոլային խմիչքների արտադրության զարգացման պատմությունը:
14. Սննդի արդյունաբերության՝ ոչ ալկոհոլային և զովացուցիչ ըմպելիքների, ծխախոտի, պահածոների արտադրության զարգացման պատմությունը
15. Բուսաբուծության զարգացման պատմությունը և արդի վիճակը:
16. Անասնապահության զարգացման պատմությունը և արդի վիճակը
17. Տրանսպորտի ճյուղային կառուցվածքի փոփոխությունը խորհրդային ժամանակահատվածում:
18. ՀՀ արտաքին տնտեսական կապերի էությունը և զարգացման միտումները:
19. ՀՀ ոչ արտադրական ոլորտի զարգացման պատմությունը և արդի վիճակը:
20. ՀՀ վարչատրածքային բաժանումը հետխորհրդային ժամանակահատվածում:

[16] Կիրառվում է կամ առաջին, կամ երկրորդ պարբերությունն ըստ դասընթացի ամփոփման ձևի:

**21.** ՀՀ մարզերի տնտեսական համալիր բնութագիրը:

<u>Ա) 1-ին ընթացիկ քննություն (կիսամյակի 9-10 շաբաթվա ընթացքում)</u>
<u>(1-ին ընթացիկ ստուգում (կիսամյակի շաբաթվա ընթացքում)</u>
**Ընդգրկված թեմաները.**

1. Խորհրդային Հայաստանի գոյության վերջին ժամանակահատվածը և Հայաստանի Հանրապետության անկախացումը:
2. ՀՀ տարածքը, դիրքը, սահմանները:

3.Բնական պայմանների և ռեսուրսերի տնտեսաաշխարհագրական գնահատականը:

4. ՀՀ բնակչության թվաքանակը, շարժի ընդհանուր բնութա-գիրը,աշխատանքային ռեսուրսները և բնակչության տարաբնակեցումը:
5 ՀՀ արդյունաբերության ճյուղային և տարածքային կառուցվածքը:

**Ընդգրկված հարցեր.**

1. ՀՀ տարածքը դիրքը, սահմանները:
2. ՀՀ մետաղային ռեսուրսների տարածքային տեղաբաշխումը:
3. ՀՀ ոչ մետաղային ռեսուրների տեղաբաշխումը:
4. ՀՀ բնակչության թիվը, շարժի բնութագիրը, տարածքային տեղաբաշխումը և տարաբնակեցումը
5. ՀՀ ընդերքի ռեսուրսների տնտեսական գնահատականը՝ մետաղային ռեսուրսներ:
6. ՀՀ ընդերքի ռեսուրսների տնտեսական գնահատականը՝ ոչ մետաղային ռեսուրսներ:
7. ՀՀ արդյունաբերության ընդհանուր վիճակի վերլուծությունը:

<u>Բ) 2-րդ ընթացիկ քննություն (կիսամյակի 19-20 շաբաթվա ընթացքում)</u>
<u>(2-րդ ընթացիկ ստուգում (կիսամյակի շաբաթվա ընթացքում)</u>
**Ընդգրկվող թեմաները.**

1. ՀՀ արդյունաբերության ճյուղերի նկարագիրը և տեղաբաշխումը:

2. ՀՀ գյուղատնտեսության տարածքային և ճյուղային կառուցվածքը:

3. ՀՀ տրանսպորտի տնտեսական գնահակատանը: ՀՀ ոչ արտադրական ոլորտը:

4. ՀՀ արտաքին տնտեսական կապերի բնութագիրը

5. ՀՀ վարչատարածքային կառուցվածքը և մարզերի տնտեսական գնահատականը:

**Ընդգրկված հարցեր.**

1. ՀՀ վառելիքաէներգետիկ արդյունաբերության զարգացումը և արդի վիճակը:
2. Լեռնահանքային արդյունաբերության և մետաղաձուլություն զարգացումը և արդի վիճակը:
3. Քիմիական արդյունաբերության զարգացումը և արդի վիճակը:
4. Մեքենաշինություն զարգացումը և արդի վիճակը
5. Շինանյութերի արդյունաբերություն զարգացումը և արդի վիճակը
6. Թեթև արդյունաբերության զարգացումը և արդի վիճակը
7. Սննդի արդյունաբերության՝ ալրաղացային տնտեսության, կաթնամթերքի, մսամթերքի, ալկոհոլային խմիչքների արտադրության զարգացման պատմությունը:
8. Սննդի արդյունաբերության՝ ոչ ալկոհոլային և զովացուցիչ ըմպելիքների, ծխախոտի, պահածոների արտադրության զարգացման պատմությունը
9. Բուսաբուծության զարգացման պատմությունը և արդի վիճակը:
10. Անասնապահության զարգացման պատմությունը և արդի վիճակը
11. Տրանսպորտի ճյուղային կառուցվածքի փոփոխությունը խորհրդային ժամանակահատվածում:
12. ՀՀ արտաքին տնտեսական կապերի էությունը և զարգացման միտումները:
13. ՀՀ ոչ արտադրական ոլորտի զարգացման պատմությունը և արդի վիճակը:
14. ՀՀ վարչատրածքային բաժանումը հետխորհրդային ժամանակահատվածում:
15. ՀՀ մարզերի տնտեսական համալիր բնութագիրը:

**15.1. Գնահատման չափանիշները[17].**

- Տեսական գիտելիքները ստուգվում են երկու գրավոր ընթացիկ քննությամբ:
- Սեմինար պարապմունքները աշխատանքները ստուգվում են 3 պատասխանով:
- Ինքնուրույն աշխատանքը հանձնարարվում են 1 աշխատանք մեկ կիսամյակի համար:

[17] Լրացվում է ըստ ամբիոնի /դասախոսի որոշման

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

**Մասնագիտություն՝** 101801.00.6, Սերվիս

/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

**Կրթական ծրագիր՝** 101801.01.6, Սերվիս

/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

**Որակավորման աստիճան՝** սերվիսի բակալավր

Վանաձոր 2023

**Առկա ուսուցման համակարգ**

<table>
<tr><td rowspan="1">Դասընթացի թվանիշը, անվանումը</td><td colspan="4">ԷԻԿ/բ-170  Հայաստանի աշխարհագրություն</td></tr>
<tr><td>Դասընթացին հատկացվող կրեդիտը</td><td colspan="4">4 կրեդիտ</td></tr>
<tr><td>Ուսումնառության տարի / կիսամյակ</td><td colspan="4">1-ին տարի, 2-րդ կիսամյակ</td></tr>
<tr><td rowspan="6">Ժամերի բաշխումը</td><td rowspan="4">Լսարանային</td><td rowspan="4">56</td><td>Դասախոսություն</td><td>28</td></tr>
<tr><td>Սեմինար</td><td></td></tr>
<tr><td>Լաբորատոր  աշխատանք</td><td></td></tr>
<tr><td>Գործնական աշխատանք</td><td>28</td></tr>
<tr><td>Ինքնուրույն</td><td colspan="3">64</td></tr>
<tr><td>Ընդամենը</td><td colspan="3">120</td></tr>
<tr><td>Ստուգման ձևը</td><td colspan="4">Քննություն, ընթացիկ քննություն,</td></tr>
<tr><td>Դասընթացի նպատակը</td><td colspan="4">Ձևավորել գիտելքնիր Հայաստանի տնտեսության վերաբերյալ<br>▪ Հայաստանի տնտեսական․ զարգացման օրինաչափությունններրի վերաբերյալ գիտելիքների փոխանցում ուսանողներին:<br>▪ Հանրապետության տնտեսության կառուցվածքի հետազոտության շրջանակներում հմտությունների և կարողությունների ձևավորում ուսանողների մոտ:<br>▪ Պատմական իրադարձությունների համեմատության և վերլուծելու ունակությունների ձեռքբերում ուսանողների կողմից:<br>▪ Տնտեսական ներուժի վերլուծելու կարողությունների ձևավորում տարբեր իրավիճակներում:</td></tr>
<tr><td>Դասընթացի վերջնարդյունքները</td><td colspan="4">Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.<br>Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.<br>Գիտելիք<br>իմանա Հայաստանի տնտեսության ձևավորման տեսական հիմունքները,<br>իմանա տնտեսության ուսումնասիրման մեթոդական հիմքները<br>Հայաստանի տնտեսական․ զարգացման</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | օրինաչափությունննների վերաբերյալ գիտելիքներ:<br><br>*Հմտություն* տիրապետի վերլուծելու, համադրելու, սինթեզելու, վիճակագրական հետազոտության մեթոդներին, Հանրապետության տնտեսության կառուցվածքի հետազոտության շրջանակներում հմտություններ և կարողություններ<br>Պատմական իրադարձությունների համեմատության և վերլուծելու ունակություններ<br>*Կարողունակություն*<br>կարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,<br>տնտեսական ներուժի վերլուծելու կարողություն<br>ինքնուրույն հետազոտություններ տնտեսության վերաբերյալ և կատարել եզրահանգումներ ըստ արդյունքների: |
| **Դասընթացի բովանդակությունը** | 1. Խորհրդային Հայաստանի գոյության վերջին ժամանակահատվածը և Հայաստանի Հանրապետության անկախացումը:<br>2. ՀՀ տարածքը, դիրքը, սահմանները: Բնական պայմանների և ռեսուրսերի տնտեսաաշխարհագրական գնահատականը:<br>3. ՀՀ բնակչության թվաքանակը, շարժի ընդհանուր բնութա-գիրը,աշխատանքային ռեսուրսները և բնակչության<br>4.ՀՀ արդյունաբերության ճյուղերի նկարագիրը և տեղա-բաշխումը:<br>4.ՀՀ գյուղատնտեսության տարածքային և ճյուղային կառուցվածքը:<br>5.ՀՀ տրանսպորտի տնտեսական գնահակատանը: ՀՀ ոչ արտադրական ոլորտը:<br>6ՀՀ արտաքին տնտեսական կապերի բնութագիրը<br>7ՀՀ վարչատարածքային կառուցվածքը և մարզերի տնտեսական գնահատականը: |
| **Գնահատման մեթոդները և չափանիշները** | Գնահատման գործընթացն իրականացվում է ՎՊՀ ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգով: |
| **Գրականություն** | Պոտոսյան Ա. ՀՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրություն Ե. 2020 |
| | Ա. Ավագյան Հայաստանի ընդերքի ռեսուրսների աշխարհագրական գնահատականը 2001 |
| | Ս. Մելքումյան ՀՀ և ԼՂՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն 2005 |
| | Ս. Մելքումյան ՀՀ արտաքին տնտեսական կապերը 2001 |
| | Վալեսյան Լ Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, |
| | ՀՀ տարեկան վիճակագրական տեղեկագիրք |